

Արմեա ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԿՈՒՄԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՇՆԱԾԽԱՐՀԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԻ ՀԱՍՏԱՏԵՂՈՒՄ

Հինարևելյան մի շաբթ ավանդույթներում հայտնի է «երկնային արքայության» առասպեկտական թեման: Ըստ այդ թեմայի՝ երկնքում իրար են հաջորդում աստվածների մի քանի արքաներ, որոնցից ամեն հաջորդն ուժով է խլում իշխանությունը նախորդից: Խուռիական տարրերակում աստվածների առաջին արքան էր Ալալուն, որին զահընկեց է անում նրա որդի Անուն (երկնի աստվածը): Անուն իր հերքին զահընկեց է անում նրա որդի Կումարքին, որը կուլ է տալիս նրա «այրականությունը» և հղանում մի քանի աստվածներով, այդ թվում՝ ամպրոպային Թեշուրով: Թեշուրը դառնում է աստվածների վերջին սերնդի արքան:¹

Կումարքին խուռիական բոլոր տարածքներում հայտնի աստվածներից է, որի ամենահին հիշատակությունը, Kumarewe ձևով, հայտնի է Սարիի խուռիական մի աղյուսակից (մ.թ.ա. մոտ 1700 թ.): Նա կոչվել է «իմաստուն արքա» և «աստվածների հայր»: Սիրիական աստվածաբանությունը նույնացրել էր նրան միջինեմբրատյան հացահատիկի աստված՝ Դագանի, շումերա-աքքադական Ենիլի և ուզարիթյան Էլի հետ: Խեթական աստվածների ցուցակներում Կումարքին ներկայացվել է որպես շումեր NISABA, իսկ Halki (խաք. Kait) «հացահատիկ», որը թույլ է տալիս ասել, որ նա եղել է հացահատիկի մի աստված:²

Կումարքին, զրկվելով զահից, իր տարրեր որդիների միջոցով մի քանի անգամ փորձում է զահընկեց անել Թեշուրին, բայց վերջինս հաղթում է նրանց և պահպանում զահը: Թեշուրի երբայր-հակառակորդներից է որպես ամենին աճող քարեն իրեշ նկարագրվող Ուլլիկումնին: Նա ծնվել էր «ասար աղյուր լճում» գտնվող «մեծ ժայռի» Կումարքի կողմից թեղմնավորման արյունքում: Աստվածները Թեշուրի զիսավորությամբ կովում են հսկա քարեն իրեշի դեմ, բայց չեն կարողանում վճասել նրան: Առասպեկտի ակարորդ չի պահպանվել, բայց այն պետք է ներկայացներ Թեշուրի վերջնական հաղթանակը:³

Թեշուրը դիցարանի գերազույն աստվածն էր, աստվածների վերջին սերնդի արքան, որի առասպեկտները առանցքային դեր ունեն խուռիական առասպեկտաբնության մեջ: Նրա ուրարտական համապատասխանությունն էր Թեշերան՝ Ուրարտուի պետական դիցարանի երկրորդ մեծ աստվածը: Թեշուր-Թեշերայի պաշտամունքի կենտրոններն էին Կոմո / Qumenu և Կոմմանն քաղաքները, առաջինը՝ Հայկական լեռնաշխարհի ծայր հարավում, Կորդվաց Արարատ լեռան (ներկայում՝ Ջուղի) շրջանում, երկրորդը՝ ծայր հարավ-արևմտուքում՝ Կապաղովկիայում:

Թեշուրի ծնողի և հակառակորդի՝ շարքի երկու կարևորագույն կերպարների անունները պարունակում են կոմ- բաղադրիչը և, այսպես թե այնպես, ստուգաբնական, կամ գոմե առասպեկտաբնական մտածողությանը հատուկ համահունչ անունների համապատասխանցման (անագրամային) մակարդակով, պետք է առնչվեն Թե-

¹ «Երկնային արքայության» թեմայի առասպեկտների և նրանց հնդեվրոպական կապերի վերաբերյալ տե՛ս օրինակ՝ S. Littleton, *The 'Kingship in Heaven' Theme. Myth and Law Among the Indo-Europeans*. Berkeley, Los Angeles, Idem, Is the 'Kingship in Heaven' Theme Indo-European? Indo-European and Indo-Europeans. Philadelphia 1970.

² Կումարքի վերաբերյալ տե՛ս օրինակ՝ *Мифы народов мира*, Т. II, М., 1982, стр. 28; G. Leick, *A Dictionary of Ancient Near Eastern Mythology*. London, New York 1991, p. 106-107; Г. Вильхельմ, *Древний народ хурриты*, М., 1992, стр. 91-92: Խեթական հացահատիկի աստվածության վերաբերյալ՝ A. Kammenhuber. *Die Hethitische Getreidegottheit Halki/Nisaba*. Near Eastern Studies. Bulletin of the Middle Eastern Culture Center in Japan, 5. Wiesbaden 1991:

³ В. И в а н о в, *Луна упавшая с неба. Древняя литература Малой Азии*, М., 1977, стр. 125 сл.; H. Hoffner. *Hittite Myths* [tr. by H.A. Hoffner]. Atlanta 1990, p. 52 ff.

շուրի սրբազն կենտրոնների համահունչ անվանումների հետ։⁴ Ըստ Է. Ֆոռերի՝ համընդիմանոր ընդունելություն գտած մեկնաբանության, Kumarbi-ն սեռական հոլովկլ ներկայացված մի տեղանուն է՝ «Kumar-ի (աստված)»։ Այդ տեղանունն, իր հերթին, համարվում է կազմված կոմ-արմատով և -ար ածանցով։ Թեև ուսումնասիրողների կողմից *Kumar-ը համադրվել է որոշ համահունչ տեղանունների հետ, բայց և այնպես նշկում է, որ հենց այդ անունով տեղանք սեպազիր աղբյուրներում այլուրք հայտնի չէ։ Սա մեկնաբանվում է որպես այդ տեղանվան ստեղծման դարաշրջանի վաղնջականության ակնարկ։⁵

Կումարբի և Ուլլիկումմի առասպեսները պատմական ժամանակներում տեղայնացված էին խուռիների տարածման արեալում՝ Հյուսիսային Միջազգետքում և Սիրիայում։⁶ Կումարբի հայրենիքն էր համարվում խուռական հին արքայական քաղաք Ուրկեշը հյուսիսային Միջազգետքում, բայց մ.թ.ա. III հազարամյակի վերջին Ուրկեշի գլխավոր աստվածը պիտի լիներ Ներզալը։⁷ Ըստ այդմ, Կումարբի հնագույն կենտրոնը պետք է փառուել այլուրք։

Ուլլիկումմի առվորաքար սոուզաբանվում է որպես «Կումմի քաղաքը կործանող»⁸ (նա պիտի կործաներ Թեշուրին, նրա Կումմիա քաղաքը և դառնար Երկնքի արքան)։ Մյուս կողմից, այն համադրվում է Կիլիկիայի Ulligama, Ulikamma լեռնանվանք (Հ. Օստեն), և կարող է մեկնաբանվել որպես վերջինիս մի երկրորդային ծևափոխությունը «ժողովրդական սոուզաբանության» հիման վրա։⁹ Այսպիսով, Ուլլիկումմին կարող է տեղայնացվել Կիլիկիայում։ Այս տեղայնացումը ևս երկրորդային է, քանի որ Կիլիկիան չէր կարող լինել խոտական ցեղերի հնագույն բնօրրանը։ Ըստ ուսումնասիրողների՝ այն գտնվել է Հայկական լեռնաշխարհում, և կարծիք կա, որ Թեշուրի առասպեսները պետք է հնում տեղայնացվեին Թոնիրակ լեռան և Վանա լճի շրջանում։¹⁰

Հայկական լեռնաշխարհի հնագույն նյուրական մշակույթի տվյալները բույլ են տալիս այլ հավանական տեղայնացում առաջարկել Ուլլիկումմի համար։ Այդ քարե հրեշի կերպարը հիշեցնում է Հայաստանի լեռներում տարածված հնագույն «Ալշապ» քարակորդղները, որոնք ամենամեծ խոտրյամբ հանդիպում են Գեղանա լեռներում և

⁴ Սեպազիր կոմ-քաղաքորիչով այս տեղանունների սոուզաբանության վերաբերյալ տե՛ս Ա. Պետրոսյան. Սազերի առասպելույթին առնչվող ծիսական բառեր և անուններ. Լեզու և լեզվաբանություն, 2:

⁵ Կումարի անվան վերաբերյալ տես A. Goetze. *Kizzuwatna and the Problem of Hittite Geography*. New Haven 1940, 5 թ. 21; B. Иванов, К этимологии некоторых миграционных культурных терминов, *Этимология* 1980, М., 1982, стр. 159; M. Խաչիկյան, *Խորրիտական և սարդական լեռներու տարածությունը*, 1985, стр. 59, 62; Г. Вильхельմ, Աշխ. աշխ., էջ 91; G. Wilhelm. *Kumme und *Kumar: Zur hurritischen Ortsnamenbildung. Beiträge zur altorientalischen Archäologie und Altertumskunde. Festschrift für Barthel Hrouda zum 65 Geburstag*. Wiesbaden 1994, S. 318-319; Որպես *Կումարի հավանական թվականուններ առաջարկել են հին շոմերական Կոմարա քաղաքը, կամ հին եզաւուական արյուրներում հիշվող նման անունով մի միջիական քաղաք (O. Gurney. Some Aspects of Hittite Religion. Oxford 1977, p. 14). հնարակոր է համարվել *Կումարը մեկնաբանել որպես «Կումմի քաղաքի շրջանը» (M. Խաչիկյան, Աշխ. աշխ., էջ 59, 62). հնմու. և Կոմրի տեղանունը (Նուզիի տեքստերից, G. Wilhelm. Op. cit. 319), խերական աղբյուրների Կոմմարա գետանունը, ենթապարար՝ Մասպիհայի շրջանում (F.G. del Monte, J. Tischler Die Orts- und Gewissernamen der hethitischen Texte. Wiesbaden 1978, S. 535. այդ գետի՝ զաղափարազիր ձևով ներկայացված աստված՝ ^DLAMMA-ն Թեշուրի հակառակորդներից էր):

⁶ Stiu օրինակ M. Astour. *Les hourrites en Syrie du nord. Rapport sommaire. Revue Hittite et asirienne* 36 (1978), p. 16.

⁷ Г. В и л ь ք է լ ь մ, Աշխ. աշխ., էջ 91-92; M. Salvini. *The Earliest Evidence of the Hurrians Before the Formation of the Reign of Mittanni. Urkesh and the Hurrians. Studies in Honor of Lloyd Cotsen. Malibu* 1998, p. 107.

⁸ B. И в а н о в, Աշխ. աշխ., էջ 159; M. Խաչիկյան, Աշխ. աշխ., էջ 70; O. Գերնի, Խետե, M., 1987, стр. 169; Г. Вильхельմ, Աշխ. աշխ., էջ 103.

⁹ E. Laroche. *Glossaire de la langue hourrite. Revue hittite et asirienne*. Т. XXXIV-XXXV. Paris 1976-77, p. 279.

¹⁰ V. H a a s, *Betrachtungen zum ursprünglichen Schauplatz der Mythen vom Gott Kumarbi. Studi Micenei ed Egeo-Anatolici. Fasc. XXII*, 1980. Idem. *Geschichte der hettitischen Religion*. Leiden, New York, KФln. 1994, S. 83.

Գեղաքունիքում (հնում՝ Գեղաքունի), Գեղ լեռան վրա և Գեղի ամրոցի մոտ, Գեղամա կամ Սևանա լճի արևմուտքում (հնում. Կումարքի առասպելի «սառը լիճը»): Ուրարտական աղբյուրներում Գեղաքունիի նախատիպր հանդիս է զայս Ueliku և Uelikuhi ձևերով¹¹ (ուն և հի-ն ուրարտական ածանցներ են՝ «Ueliku-ական երկիր»):

Ueliku-ն հիշեցնում է ամպրոպի աստծու հակառակորդ օճ-վիշապի հնդեվրոպական անունը՝ *wel¹², որի կանոնավոր արտացոլումը հայերենում պիտի լիներ գեղ: Երենք՝ «վիշապները» և նրանց վրայի պատկերներն ել պարզորդ կերպով մնկնարան-վում են օճ-վիշապի կերպարի շրջանակներում:¹³

Թեշորի և Ուլլիկումմի հակառորդյունը, այսպիսով, համադրելի է հնդեվրոպական «հիմնական առասպելի» հետ, որի համաձայն ամպրոպի աստվածը հաղթում է Օճ-վիշապին: Հատկանշական է, որ Թեշորի անունը և կերպարը ևս, ամենայն հավանականությամբ, հնդեվրոպական են:¹⁴ Ըստ այդմ, Ueliku-ն և Ullikummi-ն կարող են մնկնարանվել որպես *k- պարունակող ածանցով հնդեվրոպական կազմություններ. Ullikummi-ի վերջավորության համար՝ Izzummi դիցանունը և խորհական ուսումնական մուս, սուս վերջածանցները (հնում. ուրարտ. rura յսուր. purame, purammi «ստրոկ»):¹⁵

«Վիշապ» բարակորդների ժամանակագրության խնդրի պարզաբնույթը դժվար է՝ հարակից հնագիտական նյութի բացակայության պատճառով: Ինչևէ, նրանցից մեկի վրա ուրարտական արձանագրություն կա, որը մատնանշում է նրանց նախառուրտական ժագումը. հավանական է, որ նրանց գոնեն մի մասը շատ ավելի հին է:¹⁶

Հայկական առասպելարաբնության մեջ հացահատիկային պաշտամունքի մի վիպական հիշողություն կարելի է համարել Խորենացու տեղեկությունը Հայկայն Շարայի՝ Շիրակի եպոնիմի վերաբերյալ: Նրա մասին է հայոց հնագույն առածը. «Թէ քո Շարայի որկորն է, մեր Շիրակայ ամբարը չեն»: Եղած նյութը հնարավորություն չի տալիս միարժեքուն համարելու Կումարքի և Շարայի կերպարները, բայց մատնանշում է հացահատիկային պաշտամունքի կենտրոնացումը Շիրակում՝ Հայաստանի հացահատիկի շտեմարանում:

Արդեն Գ. Ղափանցյանը, Ելենլով անունների նմանությունից, Թեշորի սրբավայրերի Կոմ- արմատով անունները համադրել է Շիրակի Կումայրի քաղաքանվանը, երկրորդ բաղադրիչը մեկնարաններով «քարանձավային» (այր արմատից) և որպես զուգահեռ ձևեր հիշելով Քորայրի, Սուրմայրի, Քագնայր, Ավարայր տեղանունները: Ս. Պետրոսյանը սրբանց ավելացնում է նաև Հոռոնայր տեղանունը և որպես փաստարկ

¹¹ Հ. Արյունյան, *Տոպոնիմիկա Ուրարտу*, Եր., 1985, стр. 199-200.

¹² «Հնդեվրոպական ամպրոպային առասպելը վերականգնված է Վ. Իվանովի և Վ. Տուպորովի կողմից. հաշվի առնելով նրա առանձքային դերը առասպելարաբնության մեջ, այն կոչվել է «հիմնական առասպել», տես հատկապես Բ. Իվանով, Բ. Տուպորով, *Исследования в области славянских древностей*, М., 1974.»

¹³ Ա. Պերօսյան, *Отражение индоевропейского корня *wel- в армянской мифологии*, Լրարել հասարակական գիտությունների, հ. 1, Եր., 1987:

¹⁴ Ա. Պետրոսյան, *Ուրարտական գիտակող աստվածների եռյակը և պետության իշխող վերնախասիր ծագման խնդիրը*, Պատմա-քանասիրական հանդես, 2, Եր., 2002, էջ 250-253; Ա. Պետրոսյան, *Արմանական էպոս և միֆология*, Եր., 2002, стр. 53-54.

¹⁵ Արժեն Զելի, որ Ուլլիկումմի «Կումինի կործանող» մեկնարաբնությունն առավել մանրամասն կիսնապերած Վ. Իվանովը, ծանոթանադրով Վելիքունի-Գեղաքունիք երկրի վիշապ քաղաքորոշներին և հարակից հարցերին նվիրված մեր ճշված աշխատությանը (Ա. Պետրոսյան. *Отражение индоевропейского корня *wel- в армянской мифологии*, իր կարծիքում գրեց, որ Ուլլիկումմի պետը է որ սոսուզարանորեն կապված լինի Ուլիկու-ին, իսկ Կումինի քաղաքը կործանելու մոտիվը երկրորդային է, «ժողովրդական սոսուզարանության» արդյունք (ինչպես որ հավանական է համարվում Է. Լարոշի՝ խորհերենի բառարանում): Խոր. սուս ածանցի վերաբերյալ (որն, ի միջի այլոց, էականորեն չի փոխում բառիմաստր), տես I.M. Diakonoff. *Hurrisch und urartäisch*. München, 1971, p. 77; Մ. Խաչիկյան, Ծալ աշխ., էջ 48.

¹⁶ Այս հարցի վերաբերյալ տես Բ. Արակելյան, Հ. Արյունյան, *Урартская клинообразная надпись из Гарни*, Պատմա-քանասիրական հանդես, 2, Եր., 1966, էջ 291-293:

հիշում, որ Բագմայրը գտնվել է քարայրների մոտ, իսկ ըստ մի լեզենդի, Շիրակավանի շրջակայքի քարանձավներում են եղել Շարայի ամբարները:¹⁷

Հաշվի առնելով ասվածը՝ Կումայրին կարելի է համարել հենց ենթադրյալ *Kumarg-ին: Այդ կապը կարելի է պատկերացնել, օրինակ, այսպես: Կումարքի նախնական կենտրոնի անունը պեսոք է լիներ *Կումար, կամ, որ ավելի հավանական է, *Կումար (սեպագրում օ-ն հաղորդվել է ու-ով), իսկ սեպագրի Կոմմառո-ն և Կոմսի / Qumaha-ն հետագայում հայտնի են, համապատասխանաբար, որպես Կոմանա և Կոմնագեններ): Կո/սմար-ին ավելացվել է տեղանուններում հաճախ հանդիպող հնդեվրոպական *յօ- ածանցը՝ *Կո/սմարց- ո, որը հայերենի օրինաչափություններով կտար *Կումայր: Սրան էլ հետագայում հավելվել է հայոց տեղանուններին բնորոշ -ի ածանցը: Եթե այդպես է, ապա Կումայրիի վերջակորությունը կապված չէ այր «քարանձավ» բառին. ընդհանրապես, այր(h) վերջակորությամբ տեղանունները կարող են տարբեր ծագում ունենալ, իսկ Շարայի քարանձավների լեզենդը, եթե իրոք առնչվում է Կումայրիի այրի քարայրիչն, կարող է «ժողովրդական ստուգարանության» արդյունք լինել:

*Kumarg-ի ստուգարանական կապը մեջութիւն սրբավայրեր Կոմմե-ի և Կոմմառո-ի հետ հավանական է, բայց ոչ պարտադիր: Հիշենք, որ Ուլյիկումմիի անունն էլ, ամենայն հավանականությամբ, կապված չէ դրանց հետ: Անունների նմանությունը կարող էր պարարտ հող ստեղծել այդ կերպարների և տեղանունների երկրորդային, «ժողովրդական ստուգարանության» հիման վրա ստեղծված կապերի համար:

4. Կենծ Պյուտարքոսի հիշատակած մի առասպելի համաձայն (De Fluviiis, XXIII, 5) Սիրքաս աստվածը բեղմնավորում է Ժայռը, որը ծնում է Դիորդիոս անունով մի որդի: Վերջինս զրիկում է պատերազմի աստված Արեսի հետ մենամարտում և վերածվում լեռան՝ Արաքս գետի մոտ: Ակնհայտ է, որ այստեղ Սիրքասը համապատասխանում է Կումարքին, Դիորդիոսը՝ Ուլյիկումմին, իսկ Արեսը՝ Թեշուրին:¹⁸ Դիորդիոսի լեռը, հավանաբար, Սասիս է: Այն, ըստ ազգածին ավանդության, կոչվել է Արամայիսի որդի Ամասիայի անունով, իսկ ըստ «Վիպասանքի»՝ եղել վիշապազմների բնակավայր, ուր և շրայվել է Արտավազդը: Այստեղ մենք գործ ունենք առասպելի հետագա ձևակոնությունների հետ: Հատկանշական է, որ Սասիսի մերձակա Արաքսի հովինոր հայոց մեջ կոչվել է «Արայի դաշտ», իսկ Արան անվանաբանութեան հիշենում է Արեսին. Շարան էլ Ամասիայի պես Արամայիսի որդին է: Այսինքն՝ խուժական առասպելներին համարեկի այս լեզենդները կապվել են Արաքսայան դաշտում և մերձակայքում տեղայնացած ազգածին ավանդության որոշակի հերոսների հետ:

5. Այսպիսով, հավանական է, որ Ուլյիկումմիի, մեջութիւն և Կումարքիի առասպելների հմագույն տեղայնացումներից մեկը եղել է Արևելյան Հայատանում՝ Գեղամա լիճը, Արարատյան դաշտը և Ծիրակն ընդգրկող տարածքներում, որտեղ Ծիրակն իր Կումայրի քաղաքով եղել է Կումարքիի կենտրոնը: Այդ առասպելները թեև հայտնի են խուժական դիցարանությունից, բայց ծագումով, ամենայն հավանականությամբ,

¹⁷ Г. К а п պ յ ա ն, Իсторико-лингвистические работы, Т. I, Ер., 1956, стр. 50-51; Ս. Պետրոսյան. «Շիրակայ ամբարք»-ի շուրջ. Լրաբեր հասարակական գիտությունների, 1982, 3 (Կումայրիի ստուգարանության վերաբերյալ էջ 77-78): Հաշվի առնելով ասվածը անհավանական է թվում Կումայրիի կապը կիմմերների ցեղանվան հետ (Գ. Զահենկյան. Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան. Եր., 1987, էջ 495), որը միայն անունների մասնակի ննանության հիման վրա արկած մի ենթադրություն է:

¹⁸ Սիրքասի և Ուլյիկումմիի առասպելների համապատասխանության վերաբերյալ տես G. Widengren, The Mithraic Mysteries in the Greco-Roman World with Special Regard to Their Iranian Background, La Persia e il Mondo Greco-Romano. Accademia Nazionale dei Lincei. Anno 363, 1966, Quaderno 76, p. 444; Սիրերի և Արտավազդի կովկասյան ազգակիցների՝ քարից ծնվող հերոսների, Սիրքասի և Ուլյիկումմիի կապերի վերաբերյալ՝ Յ. Արզական, Նարտակական սյուժեների համապատասխանության վերաբերյալ: Արտավազդ, Ամասիա, Դրեվյանական ազգական սյուժեների համապատասխանության վերաբերյալ՝ Վ. Արզական, Նարտակական սյուժեների համապատասխանության վերաբերյալ՝ Ա. Մարտիրոսյան, 1985, стр. 157-158:

¹⁹ Պետք է նշանել, որ համապատասխանությունները միարժեք չեն: Սիրքասը Սիրերի արխական անվանաձևն է, բայց էպոսում Սիրեր իմքը պիտի վերածնվի ժայռից. Արեսի անունը համահնչ է Արային, որն իմքը Սիրերի տիպի մի մեռնող և հատնող կերպար է: Բայց և այնպես, հնարավոր է համարեկ Սասիսի հետ կապված կերպարները՝ Արտավազդ, Ամասիա, Դիորդիոս: Արտավազդի կերպարի՝ Դիորդիոսից ծագման հնարավորության վերաբերյալ տես Ա. Սատրիկյան, Արև Գեղեցիկ, Վիեննա, 1930, էջ 301:

հնդեվրոպական են: Մեկ այլ համանման կենտրոն ի հայտ է գալիս Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում: Խեթական առյուրներում այդտեղ հիշվում է Կոմմահա քաղաքը, նշանավոր իր ամպրույի աստծու պաշտամբուջով, ներառված Խեթական տերության պետական պաշտամունքի համակարգում: Այն համապատասխանեցնում են հայոց Կամախին, որտեղ և Անի ամրոցն էր, Արամազդի գլխավոր սրբատեղին:²⁰ Արամազդը հայտնի էր որպես «հայր դիցն ամենայնի» (Ազարանգեղոս § 785) և «ամպրոպային» (Խորենացի Բ.ձզ), այսինքն, իր կերպարում համատեղում էր Կումարրիի և Թեշուրի հատկանիշները: Կամախ (< Կոմմահա) և Անի պաշտամունքային տեղանունների զույգը համապատասխանում է Շիրակի Կումայրիին և Անիին: Ըստ այրմ, Կումարրիի և Թեշուրի առասպելները պիտի տեղայնացված լինեին ոչ միայն Հայկական լեռնաշխարհի ծայր հարավում և հարավ-արևմուտքում, այլ նաև հյուսիսում և հյուսիս-արևմուտքում. հյուսիսային կենտրոնները հավանաբար ավելի հին են, քան հարավայինները:

КУМАЙРИ В КОНТЕКСТЕ ДРЕВНИХ МИФОВ АРМЯНСКОГО НАГОРЬЯ

Резюме

A. Петросян

Кумайри был хурритским богом зерна, отцом бога грозы Тешшуба и его противника Улликуми. Его имя интерпретируется как название города “Кумар” в форме родительного падежа. В исторические времена культы хурритских богов были концентрированы в Северной Месопотамии и Сирии, но с древности они должны были быть локализованы на Армянском нагорье, вероятной родине хурритов (Ф. Хааз). В древнеармянской мифологии культ зерна был известен в Шираке, житнице Армении, эпоним которого Шара, по данным Хоренаци, может считаться божеством зерна. Название города Кумайри (ныне Гюмри) в Шираке может быть интерпретировано как суффигированная форма древнего *Кумара. Мифы, сопоставляемые с хурритским циклом о Кумарби и его сыновьях, известны также из соседних провинций Армении-Арагатской долины и Гегаркунико.

²⁰ Այս հարցերի շուրջ տես՝ Ա. Քույսին, Անի-Կամախը Խեթական դարաշրջանում, Պատմաբանակրական հանդես, 3, Եր., 2002, էջ 225-226, 239: